

Հ Ր Ա Մ Ա Ն N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

«ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝


1. «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 03 խմբի 02 դասի «06. Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը նախատեսված 342797.4 հազ. դրամ ծախսերը բաշխել հետևյալ կերպ.

1) «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) ու «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակում՝ 283263.9 հազ. դրամ համաձայն N 1 հավելվածի, այդ թվում՝ առաջին եռամսյակ՝ 87433.4 հազ. դրամ, առաջին կիսամյակ՝ 147145.7 հազ. դրամ, ինն ամիս՝ 230083.7 հազ. դրամ, տարեկան՝ 283263.9 հազ. դրամ,

2) էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի (ԱՐԼԻՍ) պահպանում, կառավարում և սպասարկում՝ 30746.6 հազ. դրամ համաձայն N 2 հավելվածի, այդ թվում՝ առաջին

եռամսյակ՝ 7992.0 հազ. դրամ, առաջին կիսամյակ՝ 15140.6 հազ. դրամ, ինն ամիս՝ 22291.7 հազ. դրամ, տարեկան՝ 30746.6 հազ. դրամ:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժիններում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի (գրանցամատյաններ, ձևեր, ձևաթղթեր) ձեռքբերում՝ 28786.9 հազ. դրամ՝ համաձայն N 3 հավելվածի, այդ թվում՝ առաջին եռամսյակ՝ 28786.9 հազ. դրամ, առաջին կիսամյակ՝ 28786.9 հազ. դրամ, ինն ամիս՝ 28786.9 հազ. դրամ, տարեկան՝ 28786.9 հազ. դրամ:



ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ